

1114

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՌԱՇՏԻ

ՀԱՅՈՒՀԵԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԲԱԳՈՒ

Syrmian „ԱՐՕՐ“

1899

11715

ԿԱՆՈՆԱԳԻՐ


114/11

114/15

Ռ Ա Շ Տ Ի

ՀԱՅՈՒՆԵԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ



ԲԱԳՈՒ
Տպարան «ԱՐՐ»
1899

Handwritten text in Georgian script, likely bleed-through from the reverse side of the page.

1899

Дозволено цензурою 26 Октября 1899 г. Тифлисъ.

Handwritten text in Georgian script, likely bleed-through from the reverse side of the page.




Handwritten text in Georgian script, likely bleed-through from the reverse side of the page.

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՈԱՇՏԻ ՀԱՅՈՒՅԵԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ա. Արսուսակ



§ 1. Ռաշտի հայուհեաց Բարեգործական
Ընկերութեան նպատակն է նպաստել Հայ
իգական սեռի լուսաւորութեան—իւր հո-
վանաւորութեան տակ առնելով և կառա-
վարելով „Ռաշտի Մարիամեան օրիորդաց
դպրոցը“, ամեն ճիգ և ջանք գործադրելով,
որ նա ժամանակիս պահանջներին համա-
պատասխան կրթւած և դաստիարակւած սա-
ներ արտադրէ:

ԾԱՆՕԹ. Երկս. զպր. ուսուցչ. խումբը կազմուի է մի մանկա-
վարժական խորհուրդ, որի մանրամասնութիւնները
են ընկ. եւ հոգար. պայման.:

§ 2. Բանայ Ռաշտում կար ու ձևի
արհեստանոց և Մարիամեան դպրոցաւարտ
աշակերտուհիներին, կրթութեան որոշ ցեն-
զից զուրկ հասակն առած օրիորդներին և
նորատի տիկիններին աւանդել կար ու ձև և
այլ կանացի արհեստագործութիւններ:

§ 3. Բանալ «Մանկական պարտէզ» և գործին հմուտ վարժուհու միջոցաւ հոգալ մանուկներն սկզբնական դաստիարակութիւնը և նախապատրաստել նրանց դպրոցի համար:

§ 4. Ժողովրդական աղէտների ժամանակ, ըստ կարողութեան՝ նպաստել չարիքի մեղմանալուն:

§ 5. Օգնել չքաւոր կամ թշուառ ընտանիքներին բարոյապէս կամ նիւթապէս:

§ 6. Օգնել թէ տեղական և թէ այլ տեղերի կարիք ունեցող Հայ դպրոցական կամ ուրիշ հասարակական հիմնարկութիւններին:

§ 7. Տեղական յառաջադէմ աշակերտներին կամ աշակերտուհիներին միջոցներ տալ շարունակելու իրենց կրթութիւնը՝ միջնակարգ կամ բարձրագոյն դպրոցներում:

Ծանօթութիւն-նախապէս պայմանաւորելով, որ նրանք յետ աւարտման՝ պահաւոր են մի քանի տարիներ շատ Թեթեւ ուսուցիչ ծառայել Ընկերութեան ղեկավարութեան կամ հովանաւորութեան սակ զանազ դպրոցներում:

Բ. Ընկերութեան միջոցները

§ 8. Ընկերութեանս նիւթական միջոցներն են—

- 1) Տարեկան, մշտական, հիմնական և պատւաւոր անդամների տարեկան կամ միանւագ վճարները:
- 2) Ընկերութեանս կառավարութեան կամ հովանաւորութեան ներքոյ գանձույ հիմնարկութիւններից գոյացած արդիւնք:
- 3) Վիճակախաղի արդիւնք:
- 4) Ներկայացումից, երեկոյթից և ասոնաժառից գոյացած արդիւնք:
- 5) Նուէրներ:
- 6) Դրամագլխի տօկոս:
- 7) Մարիամեան դպրոցի ստորին յարկում գանձույ խանութների վարձը:

§ 9. Ընկերութեան գումարները տրուում են տօկոսով մի որ և է բանկի կամ մի ապահով առևտրական տան-Ընկերութեանս վարչութեան պատասխանատուութեամբ: Ընթացիկ ծախքերի համար մի որոշ գումար տրուում է նոյն բանկին կամ առևտրական տանը, ընթացիկ հաշուով՝, իսկ գանձապահի մօտ, ամենաանակնկալ ծախքերի համար՝ թողնուում է 20 թուման միայն:

Գ. Ընկերութեան կազմութիւնը.

§ 10. Ընկերութիւնը կազմւած է՝ 1) տարեկան, 2) մշտական, 3) հիմնական և 4) պատւաւոր անդամներէց:

§ 11. Տարեկան անդամները լինում են իգական սեռից միայն և վճարում են ըստ կարողութեան՝ առնուազը տարեկան 10 ղռան:

Ծանօթութիւն-Այսպիսի չնչին անդամավճար նշանակելու միակ պատճառն է՝ միջոց տալ չքաւորներին եւս մասնակցելու հասարակական բարենպասակ ձեռնարկութիւններին:

§ 12. Մշտական անդամներ նրանք են, որոնք վճարում են Ընկերութեան միանւագ 25 թուման: Մշտական անդամներ միայն իգական սեռից կարող են լինել:

§ 13. Հիմնական անդամներ նրանք են, որոնք վճարում են տարեկան 5 թումանից մինչև 20 թուման և այդպիսով Ընկերութեան գրամական մասը աւելի ամուր հիմքերի վրայ դնում: Հիմնական անդամներն ևս միայն իգական սեռից են լինում:

§ 14. Պատւաւոր անդամներ ընդունւում են՝ թէ՛ արական և թէ՛ իգական սեռից, նրանք, որոնք մի աչքի ընկնող ծառայութիւն են մատուցել Ընկերութեան:

§ 15. Տարեկան, մշտական և հիմնական անդամներն ընտրուում և հաստատուում են Վարչութեան կողմից, իսկ պատւաւոր անդամներն առաջադրուում են Վարչութեան կողմից և ընտրուում ընդհանուր ժողովից, կազմուած առնուազը քաղաքումս գտնուող անդամների թւի ³/₄ մասով և գաղտնի քւէարկութեամբ:

§ 16. Անդամութիւնից զրկուում են նրանք, որոնք պարտազանց են լինում կամ փաստակար ընթացք բռնում դէպի Ընկերութիւնը:

Ծանօթութիւն-Այդպիսիները զրկուում են անդամութիւնից ընդհանուր ժողովի գաղտնի քւէարկութեամբ եւ այն ժամանակ, երբ ժողովին մասնակցում են քաղաքումս եղող անդամների թւի ³/₄-ը.

Դ. Ընկերութեան Վարչութիւնը.

§ 17. Ընկերութեան գործերը կառավարողն է վարչութիւնը, որ բաղկացած է 5 անձերից, ընտրւած իգական սեռի՝ պատւաւոր, մշտական և տարեկան անդամներից:

Ծանօթութիւն-Ընդհանուր ժողովը իւր միջից ընտրում է նախագահ, գանձապահ, 3 խորհրդատուներ եւ 3 կանդիսատներ (փոխ-անդամներ): Փոխ-անդամները

իրենց ստացած բէնեռի կարգով կը հրաւիրեն վարչութեան կողմից, փոխարինելու Վարչ. այն անդամներին, որոնք առնւազը 3 ամսով բացակայելու են քաղաքիցս կամ հրաժարուած են:

§ 18. Վարչութիւնը խորհրդատու անդամներից մէկին ընտրում է փոխ-նախագահ, որը նախագահի բացակայութեան դէպքում վարում է նրա պաշտօնը, վայելելով նաև նրա իրաւունքները: Նախագահի ներկայութեամբ՝ փոխ-նախագահը նոյն իրաւունքներն է վայելում ինչոր խորհրդատու անդամները:

§ 19. Վարչութիւնը խորհրդատու անդամներից մէկին ընտրում է քարտուղար:

Ծանօթութիւն-եթէ վարչութեան մէջ յարմար անձնաւորութիւն չգտնուեցաւ քարտուղարութեան համար, վարչութիւնը կարող է դրսից քարտուղար հրաւիրել, նոյն իսկ զգամարդկանցից, սակայն դրսից հրաւիրված քարտուղարը նիստերին ձայն տալու իրաւունք չի ունենայ:

§ 20. Վարչութիւնը ընտրում է ընդհանուր ժողովից 3 տարի պայմանաժամով:

§ 21. Վարչութիւնը ժողովում է առնւազը 20 օրը մի անգամ և ըստ պահանջման հարկին ու ըստ հրաւիրման նախագահի: Վարչութեան բոլոր նիստերն արձանագրուում

են և յաջորդ նիստին վաւերացում ներկայ եղող անդամների ստորագրութեամբ:

§ 22. Վարչութեան բոլոր գործերը վճուում են ձայների առաւելութեամբ: Ձայների հաւասարութեան դէպքում՝ նախագահի կողմը նախապատիւ է համարուում: Վարչութեան մէջ կայացած վճիռների օրինաւորութեան համար հարկաւոր է անդամներից չորսի ներկայութիւնը:

§ 23. Վարչութեան պարտաւորութիւններն են —

- 1) Սշխատել Ընկերութեան անդամների թիւը և գրամական միջոցներն աճեցնել:
- 2) Հսկել և կառավարել «Մարիամեան» օրիորդաց դպրոցը:
- 3) Հսկել և հոգալ այն դպրոցները կամ հասարակական այլ հիմնարկութիւններ ի պէտքերը, որոնք գրաւուում են ընկերութեան հովանաւթեան ներքոյ, կամ նրանից նպաստ են ստանում:
- 4) Հսկել «Մարիամեան» դպրոցի շինութեան վերանորոգութեանց և կանոնաւոր կերպով ստանալ խանութների վարձը:

5) Ընկերութեան դրամները և այլ գոյքերը շահիցման ու պահպանութեանը հսկել:

6) Պատրաստել Ընկերութեան տարեկան գործունէութեան տեղեկագիրն ու հաշիւը, ապագայ տարւայ բիւտժէն և գործունէութեան նախահաշիւն ու ներկայացնել այդ Ընդհանուր ժողովին:

§ 24. Վարչութիւնն իրաւունք ունի—

1) Ընդհանուր ժողովի հաստատած նախահաշիւի համաձայն ծախքերն անել և գործերին ընթացք տալ:

2) Միջոցների դիմել, Մարիամեան՝ զպրոցի բարդաւածման համար:

3) Դիմումներ անել զանազան անհատների և հիմնարկութեանց՝ աշակցութիւն ինդրելու — այլ և այլ հասարակական բարինպատակ գործերի համար, համաձայն ընդ. ժողովի որոշման:

4) Ընտրել իսկական, հիմնական և մշտական անդամներ:

5) Յօգուտ Ընկերութեան կազմել թատրոնական ներկայացումներ,

գրական երեկոյթներ, տօնածառեր, դասախօսութիւններ, նուագահանդէսներ և այլն:

§ 25. Վարչութեան նախագահը պէտքէ հսկէ, որ ճշտութեամբ կատարեն թէ սոյն կանոնագիրը և թէ ընդ. ժողովի և Վարչութեան վճիռները: Նախագահի և քարտուղարի անունով և ստորագրութեամբ են լինում բոլոր բանակցութիւնները որն իցէ հաստատութեանց և անձանց հետ:

§ 26. Նախագահն է նշանակում սովորական և տարեկան ընդհանուր ժողովները:

§ 27. Նախագահի քաղաքիցս բացակայութեան կամ հիւանդութեան դէպքերում, նրա բոլոր իրաւունքներն անցնում են փոխ. նախագահին, ինչպէս և վարչական և ընդ. ժողովներ նշանակելը:

§ 28. Քարտուղարն արձանագրում է Ընդ. ժողովի և Վարչութեան նիստերը, նա է վարում ընդհանրապէս դիւանը, պահում է դիւանատան գրութիւնները և Ընկերութեան կնիքը:

§ 29. Տարեկան Ընդ. ժողովին ներկայացնելու համար քարտուղարը պատրաստում է ընդհանուր հաշիւ Ընկերութեան լրացած

տարւայ կարգադրութեանց, կայքի և ընդհանրապէս գրութեան մասին, նաև մի տեսութիւն ապագայ ենթադրելիք գործունէութեան և սպասելիք մուտքի ու ելքի մասին:

§ 30. Քարտուղարի պարտականութիւնն է նաև աշակցել գանձապահին՝ ընկերութեան հասանելի գրամներն գանձելու և նոր աղբիւրներ գտնելու ու վարչութեան առաջարկելու:

§ 31. Քարտուղարին եթէ կարիք լինի վարձ նշանակել, այդ անուամբ է միմիայն Ընդ. ժողովի վճռով:

§ 32. Գանձապահը պահում է Ընկերութեան գրամական գործերը և հաշիւները: Նա է ընդունում բոլոր տարեկան վճարներն ու նւէրներն և ծախսեր է անում Վարչութեան գրաւոր կարգադրութեամբ:

Ե. Ընկերութեան Ընդ. ժողովը.

§ 33. Ընդ. ժողովները լինում են՝ սովորական և տարեկան:

§ 34. Սովորական Ընդ. ժողովները հրաւիրում են ըստ պահանջման հարկի՝ Վարչութեան որոշմամբ կամ առ նուազն ՏԱՍՏՆ անդամների ստորագրութեամբ՝ վարչութեան

եղած գրաւոր առաջարկի հիմամբ: Ընդ. ժողովի կայանալու օրուայ մասին պիտի հրատարակուի մի շաբաթ առաջ:

§ 35. Ընդ. ժողովը կայացած է համարւում, երբ ներկայ եղող անդամների թիւը պակաս չէ քան $\frac{1}{2}$ -ը Ռաշտում բնակող անդամների:

Ծանօթութիւն—Եթէ ընդհանուր ժողովը չըկայանայ՝ անդամների որոշեալ թիւը ներկայ չըգտնուելու պատճառով, այն ժամանակ նորից ժողովի հրաւէր է տրւում (երկրորդ օրը չկայացած ժողովի) երկրորդ ժողովը նշանակում է 7-րդ օրը: Եթէ երկրորդ անգամն եւս չի կայանում՝ անդամների որոշ թիւը ներկայ չըլինելու պատճառաւ, — երրորդ եւ վերջին հրաւէրն է տրւում, եւ, քանի նոցի էլ ներկայ չլինին՝ ժողովը վաւերական է:

§ 36. Ընդհանուր ժողովի իրաւունքն է իւրաքանչիւր անդամ, ընտրել իւր համար նոր նախագահ և քարտուղար, կամ այդ պաշտօնը յանձնել վարչութեան նախագահին և քարտուղարին:

§ 37. Ընդհանուր ժողովի մէջ՝ վարչութեան անդամները միւս անդամների հետ հաւասար ձայն ունին:

§ 38. Տարեկան ընդհանուր ժողով-

ները հրաւիրուում են ամեն տարի Մարտի սկզբներում:

- 1) Անցեալ տարւան հաշիւները և ընկերութեան մուտք ու ելքը քննելու և հաստատելու:
- 2) Վարչութեան պակաս անդամներն ընտրելու, եթէ կանգիդատներ չըկան:
- 3) Վարչութեան կամ անդամերի առաջարկները քննելու և հաստատելու:
- 4) Նորանոր գործեր ձեռնարկելու մասին խորհրդակցելու:
- 5) Ընկերութեան առաջիկայ տարւան բիւժէն հաստատելու:

§ 39. Ընկերութեան տարեկան հաշիւները սպագրուում են ամեն տարի և ժողովից առաջ բաժանուում անդամներին:

մանօրուքիւմ — Այդ հաշուին կցւած է լինում նաև վարչութեան կազմած սպագայ տարւայ մօտաւոր հաշեկշիւը:

§ 40. Վարչական և ընդհանուր ժողովները տեղի են ունենում «Մարիամեան» օրիորդաց դպրոցում:

2. Ընկերութեան իրաւունքները:

§ 41. Ընկերութիւնն իրաւունք ունի գնել և ծախել շարժական և անշարժ կայքեր, կապել պայմանագրութիւններ, բանալ դատ և պաշտպանել իւր շահերը վարչութեան և կամ առանձին հաւատարմատարների ձեռքով:

§ 42. Ընկերութիւնն իրաւունք ունի բանալ իւր հաշուով արական և իգական սեռերի ամեն կարգի ուսումնարաններ և ընթերցարաններ:

§ 43. Ընկերութիւնն իրաւունք ունի միջոցներ գործ գնել՝ Հայ անայնագործութիւնը զարգացնելու և այդպիսով միջոց ստալու չքաւոր ընտանիքներին՝ անայնագործութեամբ իրենց ընտանիքը կառավարելու:

§ 44. Որպէսզի Ընկերութիւնը յաջողութեամբ կարողանայ իրագործել իւր ամբողջ կանոնագիրը, կարող է դիմել ուրիշ դպրոցական և այլ հաստատութեանց օգնութեանը և իւր կողմից կարող է նրանց դրամական օժանդակութիւն տալ:

§ 45. Ընկերութիւնն ունի իւր կնիքը, որ կրում է. —

51211

«ՌԱՇՏԻ ՀԱՅՈՒՀԵԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒ-
ԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ» 1899 թ.

§ 46. Եթէ որեւիցէ պատճառով ընկե-
րութիւնն ընդհատէ իւր գործունէութիւնը,
այն ժամանակ՝ նրա բոլոր շարժական և ան-
շարժ գոյքն ու կայքը անցնում է տեղւոյս
եկեղեցական դպրոցին, իսկ եթէ այդպիսի
մի դպրոց գոյութիւն չունենայ, — Ռաշտի
Ս. Մեսրոպէ թարգմանիչ եկեղեցուն, այն
պայմանով, որ դրանից գոյացած արդիւնքը
տարէ տարի տրել՝ Ռաշտում գտնուող Հայ
Ժողովրդի ընդհանուր ժողովի որոշմամբ՝ մի
որ և է տեղի՝ դպրոցական մի հաստատու-
թեան:

Վ Ա Ի Ե Ր Ա Յ Ո Ւ Մ

Սոյն կանոնագրութիւնը՝ Հայուհեաց Բարեգործական
Ընկերութեան խնդրանոց համաձայն, գոր. ներկայացուց մեզ
Ընկերութեան Քարտուղար մեծ. պ. Յակովբ Ղազարեան, ներ-
կայ Տարւոյ օգոստոս 8 րւականաւ եւ 129 համարաւ, կրիստո-
ստեանք եւ կրկանեացնեմք մեր անձնական ստորագրութեամբ
եւ Առաջնորդական պատճենական կնիով՝ ի ստրեւ, պայմանաւ
սակայն, որ երբ Հայուհեաց Ընկերութիւնը յաջողութեամբ
Աստուծոյ՝ յսնուն Ընկերութեան ռեւէ կայուած գնէ, այն է
հասարակաց փողով տնտեսութեամբ ստացուածք ունենայ, պարտական
լինի յովանառել զայն, բայց երբ գիտութեամբ եւ հաւանու-
թեամբ քեմակալ Առաջնորդին:

Օրհնելով հայուհեացը կրթաւ եւ ազգաւն ջանքերը
յօգուտ եւ ի նպաստ մասաղ սերնդի մատուր զարգացման ու
բարոյական յառաջադիմութեան. մաղթելով ի Տեառնէ Հայու-
հեաց Բարեգործական Ընկերութեանը համար արդիւնատու եւ
յարասեւ գործունէութիւն:

28 օգոստոս 1899 թ.

՚ի ս. Վանս Ամենափրկչեան

՚ի Նոր-Ջուղա.

կնիք

Մեծաւ Աղօթարաւ
Մաղափիա Եպիսկոպոս
ՏԵՐՈՒՆԵԱՆ
Առաջ. Հայոց՝
Պարսկ-Հնդկաստանի



